Մաթեմատիկա

1. Գտի՛ր այն թիվը, որ համապատասխանում էր 6 հազարյակ + 5 տասնյակ + 3 միավոր կարգային գումարելիների գումարին:
   1) 6503
   2) 6530
   3) 6053
   4) 6035

2. Որքանո՞վ կմեծանա եռանիշ թիվը, եթե նրա գրության ձախից կցագրենք 5 թվանշանը:
   1) 1000-ով 2) 5000-ով 3) 1000 անգամ 4) 5000անգամ

3. Ինչպե՞ս կփոխվի երկու թվերի տարբերությունը, եթե նվազելին ու հանելին միաժամանակ մեծացնենք 25-ով:
   1) կփոքրանա 50-ով
   2) կփոքրանա 25-ով
   3) կմեծանա 17-ով
   4) կմնա անփոփոխ

4. Ընտրի՛ր տրված թվանշաններից այն թվանշանը, որը տեղադրելով աստղանիշի փոխարեն՝ կստանաս անհավասարություն. 7 կմ 50 դմ > 7 կմ * մ
   1) 4 2) 5 3) 6 4) 7

5. Ընտրի՛ր այն շարքը, որտեղ թվերը դասավորված են նվազման կարգով:
   1) 3737, 4896, 8534, 6521
   2) 3737, 4896, 6521, 8534
   3) 8534, 6521, 3737, 4896
   4) 8534, 6521, 4896, 3737

6. Թվի $\frac{1}{3}$ մասը հավասար է 321-ի: Ինչի՞ է հավասար այդ թիվը:
   1) 655 2) 125 3) 963 4) 802

7. Ընտրի՛ր այն պատասխանը, որն արտահայտում է 6 տ 2 ց 5 կգ-ը կիլիգրամներով:
   1) 6250 կգ 2) 6205 կգ 3) 6502 կգ 4) 6520 կգ

8. Ընտրի՛ր այն պատասխանը, որն արտահայտում է 3 ժ 15 ր-ն րոպեներով:
   1) 315 ր 2) 512 ր 3) 195 ր 4)120 ր

LIVEWORKSHEETS

9. Հավասար կողմեր ունեցող եռանկյան պարագիծը 81 սմ է: Գտի՛ր եռանկյան կողմերի երկարությունը:

1) 21սմ 2) 12 սմ 3) 36 սմ 4) 27 սմ

10. Ո՞ր գծապատկերում է 2/9 մասը ներկված:



1) 2) 3) 4)

11. Բեկյալի կողմերի երկարություններն են՝ 11 սմ, 32 սմ, 5 սմ և 13 սմ: Գտի՛ր այդ բեկյալի երկարությունը:

Պատ.՝_____:

12. 75-ը փոքրացրո՛ւ 12-ով և արդյունքը մեծացրո՛ւ 6 անգամ: Կազմի՛ր արտահայտություն և հաշվի՛ր դրա արժեքը:

Պատ.՝_____:

13. Հաշվի՛ր 586 • 5 - 1116 : (72 : 8) արտահայտության արժեքը:

Պատ.՝_____:

14. Կռահի՛ր օրինաչափությունը և ավելացրու ևս մեկ թիվ:

4, 9, 19, 34, 54, ...

15. Ուղղանկյան երկարությունը 64 մ է, որը 2 անգամ մեծ է լայնությունից: Գտի՛ր ուղղանկյան մակերեսը:

Պատ.՝_____:

16. A վայրից հակադիր ուղղությամբ միաժամանակ դուրս եկան երկու գնացք: Նրանցից մեկի արագությունը 90 կմ/ժ էր, իսկ մյուսինը 20կմ/ժ-ով պակաս: Որոշել նրանց միջև հեռավորությունը 2 ժամ հետո:

Պատ.՝_____:

LIVEWORKSHEETS